

ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Հայաստանի Հանրապետություն

Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր լրացուցիչ ֆինասավորում
Վարկի No. 8523-AM

Պայմանագրի անվանումը՝ Ա/6 Մ2-Կարմրաշեն կմ 0+985-կմ 11+791.50 ճանապարհային հատվածի
վերանորոգման շինարարական աշխատանքներ

Հղում No. CW-NCB-LRNIP-AF-2017/7

Պատվիրատու. «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
Հեռ. + 374 12-20 10 10

Կայք. www.tpio.am

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից ստացել է լրացուցիչ ֆինանսավորում Կենսական Նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել Ա/6 Մ2-Կարմրաշեն կմ 0+985-կմ 11+791.50 (Տավուշի մարզ, Հայաստան) ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներ պայմանագրի շրջանակներում: Հայաստանի Հանրապետություն

2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հրավիրում է CW-NCB-LRNIP-AF-2017/7 ներքո Ա/6 Մ2-Կարմրաշեն կմ 0+985-կմ 11+791.50 ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են՝ գոյություն ունեցող ենթահիմքի քանդում և նոր ենթահիմքի կառուցում, նոր խճային հիմքի կառուցում, ասֆալտե ծածկույթ, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացում, ճանապարհային անվտանգության ապահովման և այլ աշխատանքներ: Աշխատանքները պետք է ավարտվեն 9(ինը) ամսվա ընթացքում: Պայմանագրին արժանանալու համար հայտատուն պետք է ունենա նմանատիպ շինարարական աշխատանքների փորձ եւ համապատասխան ռեսուրսներ, ինչպես մանրամասն ներկայացվել է մրցության փաստաթղթերում:

3. Մրցույթն իրականացվելու է «Ազգային մրցակցային գնման» (NCB) ընթացակարգին համապատասխան, ինչն ամրագրված է Համաշխարհային բանկի «ՎՋՄԲ վարկային և ՄՁԸ փոխառությունների շրջանակներում գնումների ուղեցույցով» (Հունվար 2011, վերանայված Հուլիս 2014) և այն բաց է Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք անդրադառնալ 1.6 և 1.7 կետերով սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությանը:

4. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են ներբեռնել ամբողջական մրցութային փաստաթղթերը www.gnumer.am կամ www.armeps.am կայքերից: Էլեկտրոնային գնումների համակարգում գրանցված մասնակիցները ավտոմատ կերպով կստանան սույն հրավերը՝ կից մրցութային փաստաթղթերով (նշված CPV կոդերին համապատասխան): Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլեկտրոնային գնումների համակարգում և հնարավորություն ունենալ ներկայացնել հայտեր ARMEPS (www.armeps.am կայք) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Այնուամենայնիվ, ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը պատասխանատվություն չի կրում պոտենցիալ հայտատուների կողմից վերոնշյալ կայքերից փաստաթղթերի սխալ կամ թերի ներբեռնման համար, ինչպես նաև հետագայում մրցութային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:

5. Հայտերը պետք է ներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով ARMEPS (www.armeps.am կայք) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով մինչև 2017թ. դեկտեմբերի 11-ը, ժամը 16:30 (Երևանի ժամանակով): Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:
6. Ինչպես նշված է ITB 19.1 կետում, բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»: